ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 26 » դեկտեմբեր 2022թ. No 5992 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ «ՆՕԿԻ» Հ/Ձ ՍՊԸ, ՆՈՐ-ԽԱՐԲԵՐԴ, ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ,ԴԵՂԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ԻՐԱՎԱՏԵՐ՝ «ՆՕԿԻ» Հ/Ձ ՍՊԸ, ՆՈՐ-ԽԱՐԲԵՐԴ, ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ «ԲԵՏԱԴԻՆՈԿ ՊՈՎԻԴՈՆ ՅՈԴ ԼՈՒԾՈՒՅԹ ԱՐՏԱՔԻՆ ԿԻՐԱՌՄԱՆ 100ՄԳ/ՄԼ; ՊԼԱՍՏԻԿԵ ՍՐՎԱԿ 20ՄԼ, ՊԼԱՍՏԻԿԵ ՍՐՎԱԿ 30ՄԼ, ՊԼԱՍՏԻԿԵ ՍՐՎԱԿ 75ՄԼ, ՊԼԱՍՏԻԿԵ ՏԱՐԱ 1000ՄԼ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Դեղերի մասին» ՀՀ օրենքի հոդված 16-ի 31-րդ կետի 2-րդ մասը Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 162-Ն որոշման հավելված 1-ի 66-րդ կետը, «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության փորձաքննության 23.12.2022 թվականի N 0403173422 բացասական եզրակացությունը՝ Հայաստանի Հանրապետության "ՆՕԿԻ" Հ/Ձ ՍՊԸ, Նոր-Խարբերդ, Արարատի մարզ արտադրության,դեղի գրանցման հավաստագրի իրավատեր՝ "ՆՕԿԻ" Հ/Ձ ՍՊԸ, Նոր-Խարբերդ, Արարատի մարզ Հայաստանի Հանրապետություն «Բետադինոկ պովիդոն յոդ լուծույթ արտաքին կիրառման 100մգ/մլ; պլաստիկե սրվակ 20մլ, պլաստիկե սրվակ 30մլ, պլաստիկե սրվակ 75մլ, պլաստիկե տարա 1000մլ» դեղի անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման վերաբերյալ փորձագիտական թիվ 19099 առ 23.12.2022թ. բացասական եզրակացությունը, առ այն, որ հայտնաբերվել են անվտանգության արդյունավետության, որակի շտկման ենթակա անհամապատասխանություն սահմանված պահանջներին, հատկորոշիչներին, նոր գիտական տվյալներին, համաձայն «Դեղերի մասին» ՀՀ

օրենքի հոդված 16-ի 31-րդ կետի, 2-րդ մասի՝ դեղի գրանցումը ենթակա է կասեցման:

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1.Կասեցնել Հայաստանի Հանրապետության «ՆՕԿԻ» Հ/Ձ ՍՊԸ, Նոր-Խարբերդ, Արարատի մարզ արտադրության, դեղի գրանցման հավաստագրի իրավատեր՝ «ՆՕԿԻ» Հ/Ձ ՍՊԸ, Նոր-Խարբերդ, Արարատի մարզ Հայաստանի Հանրապետություն «Բետադինոկ պովիդոն յոդ լուծույթ արտաքին կիրառման 100մգ/մլ; պլաստիկե սրվակ 20մլ, պլաստիկե սրվակ 30մլ, պլաստիկե սրվակ 75մլ, պլաստիկե տարա 1000մլ» դեղի գրանցումը Հայաստանի Հանրապետությունում:

2. ՀՀ առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ա. Առաքելյանին՝

1) սույն հրամանը 2-օրյա աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ ձևով էլեկտրոնային փոստի միջոցով՝ առաքել հայտատուին:

3. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում վարչական վարույթի մասնակցին իրազեկելուն հաջորդող օրվանից:

4. Սույն հրամանը կարող է բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և 71-րդ հոդվածներով սահմանված կարգով և ժամկետներում՝ վարչական կարգով կամ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում՝ դատական կարգով:

Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

Invalid signature

X

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157